<<ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>>

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՎՊՀ-ի ռեկտոր

Գ.Գ. Խաչատրյան

" 30 " __09__ 2014թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

<<ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՊՈԱԿ-ի ԿՈՂՄԻՑ 2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

Ընդունված է գիտական խորհրդի նիստում

Արձանագրություն թիվ __7__

"_25___" _____09_____ 2014թ.

Վանաձոր-2014

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. <<Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան>> ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ <<ՎՊՀ>>), կողմից <<2015-2016 ուսումնական տարում դիմորդների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու նախապատրաստական դասընթացների կազմակերպման և անցկացման>> կանոնակարգով (այսուհետ՝ կանոնակարգ) կանոնակարգվում է <<ՎՊՀ-ի>> կողմից ավագ դպրոցների ավարտական դասարանների աշակերտներին միասնական պետական քննություններին և դպրոցների նախորդ տարիների շրջանավարտներին բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննություններին նախապատրաստելու դասընթացների (այսուհետ՝ <<Դասընթացներ>>) կազմակերպումն ու անցկացումը:

2. <<ՎՊՀ>> նախապատրաստական դասընթացները կազմակերպվում և անցկացվում են համաձայն <<ՎՊՀ>> գիտխորհրդի որոշման (արձանագրություն №___ ___. 09. 2014թ) և համագործակցության և կապերի բաժնի բուհ-դպրոց ենթաբաժնի (այսուհետ՝ Ենթաբաժին) 2014-15 ուս. տարվա աշխատանքային պլանի:

3. Նախապատրաստական դասընթացների կազմակերպումն ու անցկացումը <<ՎՊՀ-ի>> համար շահույթի նպատակ չի հետապնդում:

4. Նախապատրաստական դասընթացները կազմակերպվում և անցկացվում են <<ՎՊՀ-ի>> տարածքում, ինչպես նաև Լոռու մարզի այլ համայնքների դպրոցների տարածքներում <<ՎՊՀ-ի>> պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների ուժերով <<ՎՊՀ-ի>> ՊՈԱԿ-ի հսկողությամբ ու մեթոդական օգնությամբ՝ դպրոցների հմուտ ու մասնագիտական բարձր կարողություններ ունեցող ուսուցիչների միջոցով:

5. Դասընթացների կազմակերպման և անցկացման համար տրվում է հայտարարություն հեռուստատեսությամբ և էլեկտրոնային միջոցներով:

II. ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Դասընթացների անցկացման հիմնական նպատակներն են.

1) նպաստել յուրաքանչյուր քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածով սահմանված կարգով մրցութային հիմունքներով անվճար պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն ստանալու իրավունքից օգտվելուն:

2) ամրապնդել կապը մարզի դպրոցների հետ,

3) նպաստել մարզի դպրոցականների մասնագիտական կողմնորոշմանը:

7. Դասընթացների անցկացման հիմնական խնդիրն է.

1) նախապատրաստել մարզի անապահով դպրոցականներին <<ՎՊՀ>> ընդունելության քննություններին բոլոր մասնագիտությունների քննական առարկաներից՝ համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատած բուհական ընդունելության քննությունների ծրագրերի:

III. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

8. Դասընթացներն անցկացվում են ակադեմիական խմբերում:

9. Դասընթացներն անցկացվում են շաբաթական երկու անգամ, 2 ակադեմիական ժամ (90 րոպե) տևողությամբ՝ դպրոցների ուսումնական պարապմունքներից հետո:

10. Նախապատրաստական դասընթացներին մասնակցությունը վճարովի է:
11. Յուրաքանչյուր դասընթացի համար ուսուցման արժեքը կազմում է 10 000 դրամ մեկ ամսվա համար:
12. Ունկնդիրը կարող է մասնակցել մեկ կամ մի քանի առարկաների համար կազմակերպվող դասընթացներին:
13. Դասընթացներն ավարտելու կապակցությամբ առանձին քննություն չի նախատեսվում և ավարտողին առանձին ավարտական փաստաթուղթ չի տրվում:
14. Դասընթացներին ներգրավվելու համար ընդունելության քննություն կամ հարցազրույց չի նախատեսվում:
15. Դասընթացների շրջանավարտը բարձրագույն ուսումնական հաստատություն կարող է ընդունվել բացառապես իր գիտելիքներով, իր հանձնած քննությունների արդյունքների հիման վրա:
16. <<ՎՊՀ>> որևէ պարտավորություն չունի դասընթացներն ավարտածներին բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելու հարցերում:
17. Նախապատրաստական դասընթացներում պարապմունքները կազմակերպվում են ոչ պակաս, քան 5 ունկնդրից կազմված խմբերում:
18. Դասընթացները կազմակերպվում են 8 ամիս տևողությամբ:
19. <<ՎՊՀ>> իրավունք ունի իր աշխատակիցների միջոցով պարբերաբար ստուգելու իր տարածքից դուրս, այլ տարածքներում իրականացվող պարապմունքների ընթացքը, կազմակերպելու խորհրդատվություններ և հանդիպումներ ունկնդիրների հետ:
20. Դասընթացի համար նախատեսված մեկ ամսվա վճարումը կատարվում է մինչև տվյալ ամսվա 5-րդ օրը:
21. Վճարումը կատարվում է բանկի միջոցով <<ՎՊՀ>> հաշվեհամարին՝ յուրաքանչյուր ամիս կամ միանվագ ձևով:

IV. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

22. Դասընթացների ղեկավարումն իրականացվում է <<ՎՊՀ>> պրոռեկտորների կողմից:
23. Դասընթացների անցկացումը, համաձայն համապատասխան առարկայական ծրագրերի, ապահովվում և վերահսկվում է մասնագիտական ամբիոնների վարիչների կողմից:
24. Պարապմունքի ընթացքում ունկնդիրների հաճախելիության ստուգումը պարտադիր է, ինչը հավաստվում է համապատասխան մատյանում դասը վարողի և ունկնդրի ստորագրություններով:
25. Դասընթացների անցկացման վերահսկողությունն իրականացվում է <<ՎՊՀ>> համագործակցության և կապերի բաժնի բուհ-դպրոց ենթաբաժնի աշխատակիցների կողմից:

V. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԸ

33. Դասընթացներին կարող են մասնակցել մարզի դպրոցների 11-12-րդ դասարանների աշակերտները և դպրոցների նախորդ տարիների շրջանավարտները:
34. Դասընթացներին մասնակցելու նպատակով ունկնդիրները ներկայացնում են դիմում համագործակցության և կապերի բաժնի բուհ-դպրոց ենթաբաժին և գրանցվում:
35. Անչափահաս ունկնդրի համար դիմումը ներկայացնում և պայմանագիրը կնքում է նրա ծնողը կամ օրինական ներկայացուցիչը: